**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի մայիսի 29-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/50**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/50 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված տեխնիկական բնութագրում 1-ին չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն:** 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.
«Օդորակիչ 12000 BTU, հիմնական ռեժիմները՝ տաքացում և սառեցում, հզորությունը սառեցման ռեժիմում՝ 12000 BTU, ծախսը սառեցման ռեժիմում՝ 1100 Վտ/ժ (թույլատրվող շեղումը +- 10%), ծախսը ջեռուցման ռեժիմում՝ 1000 Վտ/ժ (թույլատրվող շեղումը +- 10%), աշխատանքային մակերեսը՝ 40մ2, աշխատանքային ջերմաստիճանը մինչև (-7 C),ներքին բլոկի չափերը՝ 80x28x20 սմ (թույլատրվող շեղումը +- 10%): Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից (անհրաժեշտության դեպքում հատուկ տեխնիկայի օգտագործմամբ): Օդորակիչները պետք է լինեն Midea, Hisense կամ Zanussi ֆիրմայի:»
**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 13)
Էլ. Փոստ՝ a.hovhannisyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ